

## Արձանագրություն N 2-06/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի հունիսի 28-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Հակոբյան Ռ.Ս., Բաղունց Գ.Ռ., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Ավետիսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Ծատրյան Ս.Բ. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ) և Հարությունյան Ռ.Ս.:

### ՕՐԱԿԱՐԳ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնափորձարարական հողամասերում իրականացվող դաշտային աշխատանքների ընթացքի մասին:
2. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնական պլաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարեգահ գյուղերի ջրամատակարարման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ստեղծման ընթացքի մասին:
4. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի շրջանավարտներին դիպլոմներ տալու մասին:
5. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Ագրոբիզնես» ամբիոնի կազմում միջազգային համագործակցության աջակցման սեկտոր ստեղծելու մասին:
6. Կաթիլային եղանակով ոռոգման ցանց ստեղծելու մասին:
7. Այլ հարցեր

**Լսեցին 1-** Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնափորձարարական հողամասերում իրականացվող դաշտային աշխատանքների ընթացքի մասին ներկայացրեց պրոռեկտոր՝ Ս.Գալստյանը, համաձայն որի այդ աշխատանքներին կցվել են համալսարանի այլ աշխատակիցներ և առաջարկվեց նրանց համար սահմանել հավելավճար: Նշվեց, որ Մարտակերտի շրջանում անձրևային առատ եղանակային պայմանների պատճառով ուսումնափորձարարական հողամասում մոլախոտային բուսականության բուռն աճ է դիտվում, որի դեմ պետք է պայքարել քաղհանի միջոցով, ուստի անհրաժեշտություն է առաջանում 2 քաղհանող բանվորների ընդգրկել այդ աշխատանքներին: Ս.Գալստյանը իրազեկեց նաև, որ գետնանուշի նորմալ զարգացում է արձանագրվում, ակնկալվում է բարձր բերքատվություն: Դրան զուգահեռ լաբորատորիայում գետնանուշի յուղի ստացման աշխատանքներն են ավարտվել և առաջարկվեց յուղի մնացորդային քանակության լաբորատոր

փորձաքննություն իրականացնել՝ այն որպես անասնապահական կեր օգտագործելու նպատակով:

**Որոշեցին 1.1-** Ընդունել ի գիտություն Շուշի տեխնոլոգիական համալսարանի ուսումնափորձարարական հողամասերում իրականացվող դաշտային աշխատանքների ընթացքի մասին պրոռեկտոր՝ Ս.Գալստյանի տեղեկատվությունը:

**1.2-** Շուշի տեխնոլոգիական համալսարանի ներքոհիշյալ աշխատակիցներին, ովքեր դաշտային աշխատանքներին անմիջական օժանդակություն են ցուցաբերում, հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը սահմանել ամենամսյա հավելավճար.

1.Մուսայելյան Վալերի Սուրենի /տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության պետ/-40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ,

2.Ավագիմյան Կարեն Ավագիմի /քաղաքաշտպանության և հակահրդեհային անվտանգության մասնագետ/-20000 (քսան հազար) ՀՀ դրամ,

3.Ավանեսյան Մխիթար Ջոնի /վարորդ/-20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

**1.3-** Հանձնարարել պրոռեկտոր՝ Ս.Գալստյանին Մարտակերտի փորձարարական հողամասում հուլիսի 1-ից ընդունել աշխատանքի բանվորներ և նրանց վարձատրել գործավարձային հիմունքներով ըստ կատարողական ակտերի՝ գումարը փոխանցելով անմիջապես աշխատողներին:

**1.4-** Հանձնարարել Ռ.Հակոբյանին գետնանուշի յուղի մնացորդային քանակությունը որպես անասնապահական կեր օգտագործելու նպատակահարմարությունը պարզելու համար իրականացնել լաբորատոր փորձաքննություն:

**Լսեցին 2-** Շուշի տեխնոլոգիական համալսարանի ուսումնական պլաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ներկայացրեց պրոռեկտոր՝ Ռ.Հարությունյանը: Նշվեց, որ ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու մասին ամբիոնների կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք քննարկվել և ուսումնական պլաններում կատարվել են համապատասխան փոփոխությունները և լրացումները:

**Որոշեցին 2-** Հաստատել Շուշի տեխնոլոգիական համալսարանի ուսումնական պլանները՝ ըստ կատարված փոփոխությունների և լրացումների:

**Լսեցին 3-** ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարեգահ գյուղերի ջրամատակարարման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ստեղծման ընթացքի մասին զեկուցեց աշխատանքային խմբի ղեկավար՝ Պ Գասպարյանը: Առաջարկվեց նախահաշիվ կազմելու նպատակով խմբում ընդգրկել նաև Հասմիկ Վարշամի Բարաջանյանին:

**Որոշեցին 3-** Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտխորհրդի N2-03/17/1 որոշմամբ հաստատված ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ և Քարեգահ գյուղերի ջրամատակարարման համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ստեղծան աշխատանքային խմբում ընդգրկել Հասմիկ Վարշամի Բաբաջանյանին (նախահաշիվ մշակող):

**Լսեցին 4-**Շուշիի տեխնոլոգիական համալսարանի շրջանավարտներին դիպլոմներ տալու մասին ներկայացրեց ուսումնամեթոդական կենտրոնի վարիչ՝ Թ.Գրիգորյանը: Նշվեց, որ դիպլոմների կազմերի և դրանց միջուկների ձեռք բերման և լրացման համար կատարված ծախսերը կազմել են շուրջ 5000-ական ՀՀ դրամ: Առաջարկեց այդ գումարը գանձել շրջանավարտներից:

**Որոշեցին 4.1-** Դիպլոմների կազմերի ու դրանց միջուկների ձեռք բերման և լրացման համար կատարված ծախսերը փոխհատուցելու նպատակով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի յուրաքանչյուր շրջանավարտից գանձել 5000-ական (հինգ հազար) ՀՀ դրամ:

**Լսեցին 5-**Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Ագրոբիզնես» ամբիոնի կազմում միջազգային համագործակցության աջակցման սեկտոր ստեղծելու առաջարկություն ներկայացվեց:

**Որոշեցին 5-**Հանձնարարել «Ագրոբիզնես» ամբիոնի վարիչ՝ Ս.Ավետիսյանին երկամսյա ժամկետում մշակել և գիտխորհրդի քննարկմանը ներկայացնել միջազգային համագործակցության սեկտորի կառուցվածքը և գործունեության ծրագիրը:

**Լսեցին 6-**ԼՂՀ Գյուղնախարարության կողմից կաթիլային եղանակով ոռոգման ցանց ստեղծելու առաջարկության մասին ներկայացրեց ռեկտոր՝ Հ.Թոքմաջյանը: Նշվեց, որ համալսարանի գիտական ներուժի միջոցով կաթիլային եղանակով ոռոգման ցանցի կառուցումը կունենա գործնական և կիրառական մեծ նշանակություն:

**Որոշեցին 6.1-**Հանձնարարել գլխավոր ինժեներ Հարություն Բայունցին իրականացնել ուսումնափորձնական հողամասում կաթիլային եղանակով ոռոգման ցանցի նախագծային-շինարարական փաստաթղթերի կազմումը:

**6.2-**Հանձնարարել պրոռեկտոր՝ Պ.Գասպարյանին ապահովել 6.1 կետով նախատեսվող աշխատանքների կատարման համար անհրաժեշտ քաղաքացիաիրավական պայմանգրի կնքումը:

**Նախագահ՝** ստորագրություն **Հ.Վ.Թոքմաջյան**  
**Քարտուղար՝** ստորագրություն **Ա.Ա.Առաքելյան**